

ինչպէս վերի խօսքերէն կ'երեւայ, Պոլսոյ Հայերուն մէջ այն ատեն տարածուած էր: Լատինաց համեմատ այսպէս պահք բռնելը կաթողիկէ Հայերու ամենամեծ յանցանքն համարուած էր, եւ յաջորդ տարիներու հալածանքներուն մասնաւորապէս կը շեշտուի: Դարանաղցւոյն ըսելը՝ թէ Մելքիսեդ, Խուլ եւ Զաքարիա եւ իրենց համախոհներ պահքը կ'աւրէին, հերձուածախօս էին, իսկ Ներսէս Սեբաստացի «Ճշմարտութեան իրաւանցն Աստուծոյ ջատագով էր» բաւական կը վկայէ, թէ կրօնական երկու բաժիններու մրցութիւն կար:

Այս միջոցին Գր. Վ. Կեսարացի Պոլիս չէր անշուշտ, ապա թէ ոչ՝ չէր կրնար անգործ կեցած ըլլալ, եւ Դարանաղցին պէտք էր որ զինքն ալ յիշէր:

Իբր 1626ին Յովհ. Խուլ տակաւին Կ. Պոլիս Պատրիարք էր: Գր. Կեսարացին երկրորդ անգամ հետն առած Կարնեցի Մինաս Վ. ը, ինչպէս նաեւ Երզնկացի Յովհ. Եպ. ը՝ Պոլիս կու գայ Յովհ. Խուլին աթոռը յափշտակելու, եւ կը յաջողի, ինչպէս կ'իմանանք հետեւեալ գրութենէն:

Այստեղ այս գրութեան հեղինակին իսկութիւնը կ'ուզեմ քննել նախ, եւ յետոյ քաղել Յովհ. Խուլի վերաբերեալ մասերը:

«Գրիգոր Վ. ոմն» Կ. Պոլսոյ Պալատիւ Ս. Միքայէլ Հրեշտակապետ եկեղեցւոյն պատմութիւնը գրած է իրրեւ ժամանակակից եւ գործակից, որ սխալ անուանակոչութեամբ Դրիգոր